# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՀ ԳՄ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Ծովինար «13» «08» 2021թ.
ժ 13:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ասլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խսկոյան, Ս. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

**ՀՀ ԳՄ ԾՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ**

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

**1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.**

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 2021 թվականի օգոստոսի 10-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 13.08.2021թ.-ին ժամը 13-30-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակիցները չէին ներկայացել, արդյունքում մասնակիցների կողմից հայտով ներկայացված գնային առաջարկները մնաց անփոփոխ:

**1-ին չափաբաժին**

Ծովինարի ներհամայնքային փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Բերդուս» ՍՊԸ | 17750620 | 12497414 | 2499483 | 14996897 |
| 2 | «Ույուտ Սենթր» ՍՊԸ | | 13500000 | 2700000 | 16200000 |
| 3 | «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ | | 14200000 | 2840000 | 17040000 |
| 4 | «Սուսմեն» ՍՊԸ | | 14340000 | 2868000 | 17208000 |
| 5 | «ՇԻՆ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | 15728952 | - | 15728952 |
| 6 | «Գագիկ-Արմեն Գազշին» ՍՊԸ | | 16308952 | - | 16308952 |
| 7 | «Նաիրի Շին» ՍՊԸ | | 17677080 | - | 17677080 |

**2-րդ չափաբաժին**

Ծովինար համայնքի մշակույթի կենտրոնի վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ

| ՀՀ | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային գինը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Նաիրի Շին» ՍՊԸ | 11535060 | 11427500 | - | 11427500 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝ որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնով՝ «Բերդուս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
- 2-րդ չափաբաժնով՝ «Նաիրի Շին» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.**

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 18.08.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում.**

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովինար, 3-րդ թաղամաս, հրապարակ 33 շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ ______________________ Ս. Բալյան

Անդամներ՝ ______________________ Ա. Մանուկյան

______________________ Հ. Գալստյան

Քարտուղար՝ ______________________ Ծ. Խաչատրյան